

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2012թ. մարտի 12-16-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության ֆինանսական բաժնի պետի տեղակալ Անետ Թոմսենը և ազգային հաշիվների բաժնի ստորաբաժանման ղեկավար Մարիա Նիլսոնը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. մարտի 12-16-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Թուրքմենստանի պետական վիճակագրական կոմիտեի պատվիրակությունը՝ կազմով ազգային հաշիվների վիճակագրության վարչության պետ Գ. Ակինիյազովայի, տարածաշրջանային վիճակագրական ծառայությունների ղեկավարներ Մ. Ակգաևի և Ա. Ատաևի, միջազգային կապերի բաժնի գլխավոր մասնագետ Դ. Պիգամովայի և արդյունաբերության վիճակագրության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ Ա. Սալիխովայի՝ «Վիճակագրական ներուժի ամրապնդում» ծրագրի շրջանակում փորձի փոխանակման նպատակով,
- ✓ 2012թ. մարտի 19-23-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության բիզնես ռեգիստրի գծով գլխավոր խորհրդական Վիբեկ Սկոլ Մոլլերը և տվյալների հավաքագրման և մեթոդաբանության գծով ավագ խորհրդատու Աշու Քոնրադը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Բիզնես վիճակագրության կատարելագործում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. ապրիլի 17-18ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Լարս Թյուգենսենը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. ապրիլի 2-6ը ՀՀ ԱՎԾ-ում էին Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի գների վիճակագրության վարչության գների բաժնի

ղեկավար Օսկարս Ալկսնիսը և Լիտվայի վիճակագրական ծառայության գների բաժնի ղեկավար Նադեժդա Ալեյևան Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի ներդրում» բաղադրիչի շրջանակում,

- ✓ 2012թ. ապրիլի 16-20ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության տվյալների տարածման բաժնի ղեկավար Անեգրետ Վուլֆը և միջազգային համագործակցության բաժնի ավագ խորհրդատու Յեսպեր Ելեմոսեն Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում: